ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ մայրեր, քույրեր, կանայք, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ գարնանային այս հերթական գեղեցիկ տոնի կապակցությամբ:

Հայ մայրերը հայ ընտանիքի և հասարակության շարժիչ ուժն են:

Նրանք են, որ դաստիարակում են քաջարի մարտիկներ, իրենց զավակների մեջ սերմանում հայրենիքի ու տան հանդեպ անմնացորդ սերն ու նվիրումը:

Հայ հասարակության մեջ մոր դերն անփոխարինելի է: Մայրերի ափի մեջ է ազգի փրկությունը, քանզի նրանք են, որ կարող են կերտել հերոսներ կամ դաստիարակել դասալիք:

Սիրելի մայրեր, քույրեր, կանայք,

ժամանակակից փոփոխվող աշխարհում շարունակեք մնալ հայ կնոջ և մոր լավագույն օրինակը, թույլ մի տվեք ձեզնից զատել ձեր գենետիկ հիշողության մեջ դաջված որակները:

Եղեք երջանիկ և երջանկացրեք, կրթեք նոր սերունդներ, ովքեր կլինեն տասնապատիկ անգամ ավելի խոհեմ, քաջ և ազատատենչ:

Շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ տոնի կապակցությամբ:

Խոնարհումս այն բոլոր մայրերին, ում որդիները որոշիչ պահին ընտրեցին Մայր Հայաստանը

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան